վասն զի՝ նա մոլար ուսմունքներով գայթակղուած՝ չէր սովորեցրել աշակերտին ճշմարիտ քրիստոնէին կարեւոր Ս. Խաչի նշանի պատմութիւնը։

40. Երբ 1828 թուականին քարոզիչներն այցելեցին Շամախի և կազմեցին իրանց ժողովները, նոցա լսելու համար հասակաւոր և ծերունի ունկնդիրներից զատ՝ գալիս էին երբեմն և հետաքրքիր պատանիներ։ Այս տեսակ պատանիներից մէկն էր Սարգիս Համբարձումեանցը, քարոզչաց յափշտակուած ունկնդիրներից մինի հրացանագործ Գէորգ Համբարձումեանցի 20 ամեայ որդին։

42. 1838 թուի վերջում քարոզիչների գործունէութիւնը Կովկասում արգելուած էր իշխանութեան հրամանով. Նուշուայ մէջ արդէն փակուած էին նոցա ուսումնարանը և տպարանը, բայց զանազան հաշիւների համար նոցանից մէկ քանիսը դեռ մնացել էին Նուշի. դոքա էին՝ Զարեմբա, Պֆանտէր, Հաուէր և Իւդա։ Սարգիսը մնաց դոցա մօտ իբրեւ տան սպասաւոր և միեւ. նոյն ժամանակ դաս էր առնում։ Նա այնչափ անձնատուր եղաւ պատուելի միսիոնարներին, որ մինչեւ անգամ պատրաստ էր արկածների ենթարկել իւր անձը նոցա համար։

ԳԼՈՒԽ Է. *երես* 50. 1843 թուին՝ մինչ Ներսէս կաթուղիկոսը Պետերբուրգում էր, Ֆիլ – Զարեմբան Նուէյցարիայից մի նամակ գրեց նորան, որով շնորհաւորում էր նորա ընտրութիւնն և վերջը խնդրում էր շնորհ և հովանաւորութիւն Սարգիս Համբարձումեանցի համար. . . ։

Այսպէս թէ այնպէս յիշեալ նամակից յետոյ Վեհափառ կաթուղիկոսի պատուէրին համաձայն Մատթէոս եպիսկոպոսը չէ թէ միայն չէր հալածում Համբարձումեանցին, այլ և շատ քաղցրութեամբ էր վարում հետը. . . .

58. 1851 թ. յունիսի 6ին Շամախու ծխական քահանայք՝ Տէր Համբարձում Տէր Յովհաննէսեան, Տէր Յովհ. Զաքարեանց և Տէր Սահակ Տէր Սահակեանց մի յայտարարութիւն մատուցին կոնսիստորիային՝ առ այն թէ՝ նոյն միջոցին երկրի սաստիկ երաշ-